ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գնումների eauction.armeps.am համակարգի միջոցով տպագրական ծառայությունների ձեռքբերման նպատակով ձևավորված «ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՏՊ-24/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան **08.01.2023թ. ժամը 16:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Կ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ազարյան, Ա. Գևորգյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Բաբայան

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Զ. Հունանյան

1. Էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի վերաբերյալ ստացված հարցադրման և պարզաբանման մասին

1.1 07.01.2024թ.-ին հնարավոր մասնակցի կողմից գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով ստացվել է հարցում «ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՏՊ-24/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված տպագրական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական բնութագրի վերաբերյալ.

Հարցում. «Հարգելի գործընկեր Խնդրում եմ պարզաբանել թե յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր քանակը առավելագույնը քանի մասի կարող է տրոհվել, քանի որ նշված է որ "Ծառայություններն իրականացվում են պատվիրատուի գրավոր պահանջի հիման վրա: Տպագրվող նյութերի քանակներն ու ձևերը համաձայնացվում են պատվիրատուի հետ" այսինք այստեղից կարելի է եզրակացնել որ, օրինակի համար առաջին չափաբաժնով 19000 հատ ձևաթղթերի պատվերը կարող է բաժանվել մի քանի մասերի, իսկ տպագրության մեջ միանգամից մեկ պատվերով 19000 հատ քանակի տպագրությունը մեկ ամբողջական պատվեր դիտարկելու դեպքում ունի տնտեսական հաշվարկ , որը համադրելի չէ մի քանի տրոհված պատվերների բաժանված 19000 հատ քանակի պատվերի հետ, տվյալ պարագայում գնառաջարկ տալու դեպքում և հետագայում անկանխատեսելի քանակությամբ պատվերների բացվելու դեպքում հնարավոր է ընկերության մոտ լրացուցիչ ծախսերի առաջացման որը կհանգեցնի շահույթի կորստի մինչև անգամ վնասի առաջացման, այդ իսկ պատճառով հնարավորության դեպքում խնդրում ենք նշել յուաքանչյուր չափաբաժնի ընդհանուր քանակի մեջ տրոհված պատվերների քանակը:»

Պարզաբանում. «Տեղեկացնում ենք, որ ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար տպագրական ծառայությունների ձեռքբերման «ՀՀ ՔԿ ԷԱՃԾՁԲ-ՏՊ-24/1» ծածկագրով գնման ընթացակարգի բոլոր չափաբաժինները կարող են տրոհվել մինչև 6 մասի:»

Հանձնաժողովը՝ հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված եզրակացությունը, որոշեց.

1. Այն ընդունել ի գիտություն և հրավերով սահմանված տպագրական ծառայությունների ձեռքբերման տեխնիկական բնութագիրը թողնել անփոփոխ:

2. Հանձնարարել սույն ընթացակարգի քարտուղար Ն. Բաբայանին գնումների https://eauction.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով պատասխանել հնարավոր մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Կարեն Հովհաննիսյան

անդամներ՝ _____ Արմեն Ազարյան

_____ Արթուր Մամյան

_____ Անի Գևորգյան

քարտուղար՝ _____ Նաիրա Բաբայան